ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

## ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթերթում: Պատասխանների ձևաթերթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

### I. Կատարել առաջադրանքները.

**1** Ո՞րն է այն թիվը, որի 20 %-ը հավասար է 6-ի:

1) 12
2) 24
3) 30
4) 36

**2** Թիվը բազմապատկեցին 4-ով և արդյունքը փոքրացրին 9-ով: Ստացվեց 11: Ո՞րն էր սկզբնական թիվը:

1) 7
2) 10
3) 5
4) 6

**3** Քանի՞ բնական թիվ կա 20 և 31 թվերի միջև:

1) 10
2) 13
3) 12
4) 11

**4** Գտնել $x$ թվանշանը, եթե $\overline{135x3}$ հնգանիշ թիվը բաժանվում է 9-ի:

1) 3
2) 6
3) 0
4) 2

**II. Գտնել արտահայտության արժեքը.**

| 5 |
|---|

$\frac{5}{2}\left(\frac{4}{5}-2\right)$

1) $-3$
2) $1$
3) $0$
4) $-15$

| 6 |
|---|

$\frac{x+7y}{x+y}$, եթե $\frac{y}{x}=2$

1) $\frac{15}{2}$
2) $1$
3) $5$
4) $3$

| 7 |
|---|

$\left(\sqrt{5}-1\right)^2+\left(\sqrt{5}+1\right)^2$

1) $0$
2) $8$
3) $6$
4) $12$

| 8 |
|---|

$15\sin\alpha$, եթե $\cos\alpha=\frac{\sqrt{5}}{3}$ և $\frac{3\pi}{2}<\alpha<2\pi$

1) $\frac{\sqrt{14}}{9}$
2) $-\frac{\sqrt{14}}{9}$
3) $-10$
4) $10$

**III. Կատարել առաջադրանքները.**

**9** Գտնել $x(x-13)=15x+7$ հավասարման արմատների միջին թվաբանականը:

1) 28
2) $-28$
3) 14
4) $-14$

**10** Գտնել $|5x-2|=|3x+10|$ հավասարման արմատների արտադրյալը:

1) $-6$
2) $-10$
3) 6
4) 12

**11** Գտնել $\cos 8x=1$ հավասարման արմատների քանակը $\left[-\frac{\pi}{2};\frac{\pi}{2}\right]$ միջակայքում:

1) 4
2) 5
3) 1
4) 3

**12** Լուծել $\lg\left(2^x+36\right)=\log_{\sqrt{2}}2$ հավասարումը:

1) 8
2) 0
3) 5
4) 6

**IV. Լուծել անհավասարումը.**

| 13 |
|---|

$2(x+3)\geq 3(1-x)$

1) $(0,6;+\infty)$
2) $(-\infty;-0,6)$
3) $\left[-\frac{3}{5};+\infty\right)$
4) $\left(-\infty;\frac{3}{5}\right]$

| 14 |
|---|

$|x-4|\leq 3$

1) $(1;7]$
2) $[1;7)$
3) $(-\infty;7]$
4) $[1;7]$

| 15 |
|---|

$\sqrt{2x-7}\geq 3$

1) $(-\infty;5]$
2) $[8;+\infty)$
3) $[5;+\infty)$
4) $(-\infty;8]$

| 16 |
|---|

$3^{x+6}\geq 81$

1) $(-2;+\infty)$
2) $(-\infty;-3]$
3) $(-\infty;+\infty)$
4) $[-2;+\infty)$

**V. Առաջին տարում դաշտի յուրաքանչյուր հեկտարից հավաքեցին 25 ցենտներ ցորեն, ընդամենը՝ 350 ցենտներ: Երկրորդ տարում դաշտի մակերեսը ընդլայնեցին 1 հեկտարով, սակայն յուրաքանչյուր հեկտարից հավաքեցին 4 ցենտներ պակաս ցորեն:**

**17** Առաջին տարում քանի՞ հեկտար էին ցանել:

1) 15
2) 14
3) 8750
4) 85

**18** Երկրորդ տարում քանի՞ ցենտներ ցորեն հավաքեցին յուրաքանչյուր հեկտարից:

1) 21
2) 25
3) 29
4) 100

**19** Երկրորդ տարում քանի՞ ցենտներ ցորեն հավաքեցին ամբողջ դաշտից:

1) 346
2) 355
3) 294
4) 315

**20** Երկրորդ տարվա ցորենի բերքը առաջին տարվա բերքի ո՞ր տոկոսն է:

1) 10
2) 70
3) 90
4) 80

**VI. Կատարել առաջադրանքները.**

21

Գտնել $(a_n)$ թվաբանական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե $4a_3 - a_9 = 18$:

1) 9
2) 10
3) 3
4) 6

22

Գտնել 8-ի բազմապատիկ բոլոր երկնիշ թվերի գումարը:

1) 600
2) 560
3) 624
4) 616

23

Գտնել $(b_n)$ երկրաչափական պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 54-ի, եթե $b_1 = 2$, $q = 3$:

1) 4
2) 5
3) 1
4) 3

24

Գտնել $x$-ը, եթե $\frac{x}{3}+1, 2x+2, 9x+3$ հաջորդականությունը երկրաչափական պրոգրեսիա է:

1) 3,5
2) 4
3) 1
4) 3

**VII. Հավասարասրուն սեղանի փոքր հիմքի երկարությունը 4 է, սրունքի երկարությունը՝ 8, իսկ սուր անկյունը՝ $60^0$:**

**25** Գտնել սեղանի մեծ անկյան աստիճանային չափը:

1) $120^0$
2) $180^0$
3) $30^0$
4) $90^0$

**26** Գտնել սեղանի բարձրությունը:

1) $4\sqrt{2}$
2) $2$
3) $4$
4) $4\sqrt{3}$

**27** Գտնել սեղանի մեծ հիմքի երկարությունը:

1) $10$
2) $12$
3) $8\sqrt{2}+4$
4) $8\sqrt{3}+4$

**28** Գտնել սեղանի մակերեսը:

1) $16\sqrt{3}+16$
2) $32\sqrt{3}$
3) $24\sqrt{3}$
4) $4\sqrt{15}+8$

**VIII. Կանոնավոր եռանկյուն բուրգի հիմքի կողմը 6 սմ է, իսկ հարթագիծը՝ 2 սմ:**

29 Գտնել բուրգի կողմնային մակերևույթի մակերեսը:

1) 18 սմ$^2$
2) $54\sqrt{3}$ սմ$^2$
3) 24 սմ$^2$
4) 36 սմ$^2$

30 Գտնել բուրգի հիմքին ներգծած շրջանագծի շառավղի երկարությունը:

1) $\sqrt{3}$ սմ
2) $\sqrt{2}$ սմ
3) 1,73 սմ
4) 2 սմ

31 Գտնել բուրգի հիմքի կողմին առընթեր երկնիստ անկյան աստիճանային չափը:

1) $60^0$
2) $75^0$
3) $30^0$
4) $45^0$

32 Գտնել բուրգի ծավալը:

1) 6 սմ$^3$
2) $3\sqrt{3}$ սմ$^3$
3) 5,19 սմ$^3$
4) $3\sqrt{2}$ սմ$^3$

**IX. Տրված են $A(1;2)$, $B(-4;3)$ և $C(-2;13)$ կետերը:**

| 33 |
|---|

Գտնել $\overrightarrow{AB}$ վեկտորի կոորդինատները:

1) $\{5;-1\}$
2) $\{-3;5\}$
3) $\{-3;1\}$
4) $\{-5;1\}$

| 34 |
|---|

Գտնել $AC$ հատվածի երկարությունը:

1) $\sqrt{126}$
2) $\sqrt{112}$
3) $\sqrt{130}$
4) $\sqrt{122}$

| 35 |
|---|

Գտնել $\overrightarrow{AB}$ և $\overrightarrow{BC}$ վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

1) $60^0$
2) $90^0$
3) $30^0$
4) $45^0$

| 36 |
|---|

Տրված կետերից որո՞նք են գտնվում $x^2+y^2=25$ շրջանագծի վրա:

1) $B$-ն
2) $C$-ն
3) $A$-ն
4) $A$-ն և $B$-ն

**X. Տրված է $f(x)=3x+\frac{16}{x^3}$ ֆունկցիան:**

| 37 |
|---|

Գտնել $f$ ֆունկցիայի մինիմումի կետը:

| 38 |
|---|

Գտնել $f$ ֆունկցիայի էքստրեմումի արժեքներից մեծագույնը:

| 39 |
|---|

Գտնել $f$ ֆունկցիայի գրաֆիկի $x_0=-2$ աբսցիսն ունեցող կետում տարված շոշափողի անկյունային գործակիցը:

| 40 |
|---|

Գտնել $b$-ի բոլոր ամբողջ արժեքների քանակը, որոնցից յուրաքանչյուրի դեպքում $y=b$ ուղիղը $f$ ֆունկցիայի գրաֆիկի հետ ընդհանուր կետ չունի:

**XI. Տրված է $\begin{cases} \sqrt{\pi - x} < \sqrt{6\pi} \\ \cos^2 x - \sin^2 x = 1 \end{cases}$ համակարգը:**

| 41 |
|---|

Գտնել համակարգի անհավասարման ամբողջ լուծումների քանակը:

| 42 |
|---|

Գտնել համակարգի հավասարման ամենափոքր դրական և ամենամեծ բացասական արմատների գումարը:

| 43 |
|---|

Գտնել համակարգի լուծումների քանակը:

| 44 |
|---|

Գտնել համակարգի այն լուծումների քանակը, որոնք բավարարում են $\cos x \le 0$ պայմանին:

**XII. Տրված է $a$ պարամետրով $\lg(ax)=2\lg(x+2)$ հավասարումը $(a\neq 0)$:**

| 45 |
|---|

**Ճի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:**

1. $a=8$ դեպքում հավասարումն ունի միակ արմատ:

2. Հավասարումն ունի երկու արմատ միայն $a>9$ դեպքում:

3. Հավասարումն ունի ամբողջ արմատ միայն $a=8$ դեպքում:

4. Յանկացած $a<0$ դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:

5. Եթե $a>10$, ապա հավասարման արմատները 3-ից մեծ թվեր են:

6. Եթե $a\in(5;7)$, ապա հավասարումն արմատ չունի:

## **Բ մակարդակ**

**XIII.** **Միմյանցից 75 կմ հեռավորության վրա գտնվող $A$ և $B$ վայրերից միաժամանակ միմյանց ընդառաջ մեկնեցին երկու հեծանվորդ: $A$- ից մեկնած հեծանվորդը $B$ հասավ նրանց հանդիպումից 4,5 ժամ անց, իսկ $B$-ից մեկնածը $A$ հասավ հանդիպումից 2 ժամ անց:**

| 46 | Քանի՞ ժամ հետո հանդիպեցին հեծանվորդները: |
|---|---|

| 47 | Քանի՞ ժամ տևեց $B$-ից մեկնած հեծանվորդի ուղևորությունը: |
|---|---|

| 48 | $A$-ից մեկնած հեծանվորդի 6 ժամում անցած ճանապարհը քանի՞ ժամում կանցնի $B$-ից մեկնած հեծանվորդը: |
|---|---|

| 49 | Քանի՞ կմ/ժ է $B$-ից մեկնած հեծանվորդի արագությունը: |
|---|---|

**XIV.** $ABC$ **եռանկյան** $AB$ **և** $BC$ **կողմերի վրա վերցված են համապատասխանաբար** $M$ **և** $N$ **կետերն այնպես, որ** $AM:MB=1:2$: $AN$ **և** $CM$ **հատվածները հատվում են** $O$ **կետում, ընդ որում** $S_{AOM}=S_{MON}=6$

| 50 |
|---|

Գտնել $\dfrac{BC}{NC}$ հարաբերությունը:

| 51 |
|---|

Գտնել $MNB$ եռանկյան մակերեսը:

| 52 |
|---|

Գտնել $ANC$ եռանկյանը հավասարամեծ քառակուսու կողմը:

| 53 |
|---|

Գտնել $CO:OM$ հարաբերությունը:

**XV. Գտնել արտահայտության արժեքը.**

54 $(2a-3)$, եթե $P(x)=x^4-ax^2-19$ բազմանդամը $(x^2+2)$-ի բաժանելիս ստացվում է 25 մնացորդ:

55 $\sqrt{a+15-6\sqrt{a+6}}+\dfrac{a-3}{\sqrt{a+6}-3}$, եթե $a=\sqrt{3}$

56 $\log_2\left|\log_{0,5}5\right|+\log_2\left|\log_{0,2}2\right|$

57 $\dfrac{9-\arccos(\cos 9)}{\arcsin(\sin 0,8\pi)}$

**XVI. Տրված է $x\left|x-2\sqrt{a-7}\right|=9$ հավասարումը (** $a$-ն պարամետր է**):**

| 58 |
|---|

Գտնել $a$-ի այն բնական արժեքների քանակը, որոնց դեպքում հավասարումը ունի ճիշտ մեկ արմատ:

| 59 |
|---|

Գտնել $a$-ի այն արժեքը, որի դեպքում հավասարումը ունի ճիշտ երկու արմատ:

| 60 |
|---|

Գտնել $a$-ի այն ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում հավասարումը ունի ճիշտ երեք արմատ:

| 61 |
|---|

Գտնել հավասարման բոլոր արմատների գումարը $a=23$-ի դեպքում:

**XVII. Կատարել առաջադրանքները.**

62 Քանի՞ ուղղանկյունանիստ կա, որոնց չափումներից յուրաքանչյուրը 1-ից մինչև 6-ը ներառյալ բնական թվերից են (ուղղանկյունանիստի չափումները տեղափոխելիս ուղղանկյունանիստը համարել նույնը):

63 Գտնել ուռուցիկ տասներկուանկյան կողմերի և անկյունագծերի քանակների գումարը:

**XVIII. Տրված է $f(x)=\sqrt{5x-x^2}\sin\frac{\pi x}{3}$ ֆունկցիան:**

| 64 |
|---|

**Ճի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:**

1. $f(\pi)>0$ :

2. Գոյություն ունեն $x$-ի ճիշտ հինգ ամբողջ արժեք, որոնց դեպքում $f$ ֆունկցիան ոչ բացասական է:

3. $f$ ֆունկցիան սահմանափակ է:

4. $f$ ֆունկցիայի զրոների քանակը վերջավոր չէ:

5. $f$ ֆունկցիայի մեծագույն արժեքը 2,5-ն է:

6. (0; 1,5) միջակայքում $f$ ֆունկցիան աճող է:

**XIX.** $ABCDA_1B_1C_1D_1$ **թեք զուգահեռանիստի հիմքը** $AD = 4$ **և** $AB = 3$ **կից կողմերով ուղղանկյուն է, իսկ 4 երկարությամբ** $AA_1$ **կողմնային կողը հիմքի՝ իրեն կից կողմերի հետ կազմում է** $60^0$**-ի անկյուն:** $A_1O$ **-ն զուգահեռանիստի բարձրություն է,** $K$ **-ն՝** $AD$ **հատվածի միջնակետը:**

| 65 |
|---|

**Ճի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:**

1. Զուգահեռանիստի $A_1$ գագաթը պրոյեկտվում է $ABCD$ ուղղանկյան $AC$ անկյունագծի վրա:

2. $\angle A_1KO$-ն $A_1ADB$ երկնիստ անկյան գծային անկյունն է:

3. $CC_1$ կողմնային կողի և հիմքի հարթության կազմած անկյունը $45^0$ է:

4. $ABOK$ քառանկյունը քառակուսի է:

5. $A_1KO$ հարթությամբ առաջացած հատույթի մակերեսը $3\sqrt{2}$ է:

6. $AA_1KO$ բուրգի ծավալը 18 անգամ փոքր է տրված զուգահեռանիստի ծավալից: